56. ՀՈՒ ՎԵՐ ՄԻՆ ՊԵՆԻ ՀԵՏԱՆ ԸՆԳՆԻ, ԿՀԱՄՆԻ

Մին դոնըմ Սուղումուն իմաստունը ման կյալ տեղա ետ տըռնաջիս տեսնըմ ա մին լավ բախչա։ Ետեղ, մին կաղնու տակի, տեսնըմ ա մին մարթ գալուն կաղնի ծառին տեմ ըրած մին պեն ա կյիրըմ։ Կյրածըն էն ա ինըմ, վեր Սուղումուն իմաստունը բեդմա ուրան Ղարաղուշ ընըմավեր սև մորթավ դյաղին տա ուրան ղաշանդյ ախճիգյը։

Սուղումուն իմաստունը շատ ա ստիբըմ էն մարթին, վեր կյրածը ճընջի, ամմա էտ մարթը ասըմ ա. — Կյիրածը ճընջվիլ չի, ամմա մարթ հինչի օղի կըհասնի. կըռավավ ա, դավավ ա, սերավ ա, կըհասնի։

Սուղումուն իմաստունը բեքյեփ կյամ ա ուրան պալատը։

Կընեգյըն ասըմ ա. — էտ հի՞նչ ա պըտահալ, վըեր ըրփըթավուր, սև օթի յըս տեռալ։

Տա լոխ կընգանը նաղլ ա անըմ։

Կընեգյըն ասըմ ա. — Քյեփտ քյոք պահի, յըես կըգյիդամ, թա հինչ կանիմ։

Մարթըկընեգյ ուրուր նըհետ խորուրթ ըն անըմ, կանչըմ էն մորթին սև Ղարաղուշ ընըմավեր դյաղին, մին կանվերթ տամ, ղըրկըմ բախտ պիժանողին կոշտը։

Ըտրա մանին Ղարաղուշը գյուդում ար, ամմա դե հինչ ա՞նի, ուրան տարը հունցու ասըմ ա, ինդի բեդմա անի։ Տա հըղե յա ընգնըմ, քյինըմ։

Քյինըմ ա, քյինըմ, շատ ա քյինըմ, թա խըրեգյ, շատ նան խըրեգյը աստուծ ա գյուդում, հըղեցը պըտահըմ ա մին թաքավերի։

Էտ թաքավերը հըրցընըմ ա.— Ըշտեղ ըս քյինըմ, այ Ղարաղուշ։

Ղարաղուշըն ասըմ ա. — Քյինըմ ըմ բախտ պիժանողին կոշտը։

Էտ թաքավերըն ասըմ ա. — Ցըես էլ մին պեն օնիմ փըսպըրելի բախտ պիժանողին։ Հինչ օզըմ ըս, քյըեզ կըտամ, մինակ էտ բախտ պիժանողին ասի, վեր էս հինչ երգյիրըմը մին թաքավեր կա, վեր ուրան հետի մին պալատ ա շինըմ, դաչ քյինելի հետի, ամմա շուտ պարան ա կյամ, թա խե՞ յա պարան կյամ, գյիդվըմ չի։

Ղարաղուշը ճընապար ա ընգնըմ, քյինըմ։

Քյինըմ ա, քյինըմ, շատ ա քյինըմ, թա խրեգյ ա քյինըմ, պըտահըմ ա մին ծովի։ Մտածըմ ա, թա հունց անց կենա։ Էտ մունուտին ծովան մին ղաշանգյ ծուկըն ա տուս կյամ։ Ծուկնը հըրցնըմ ա. — Թո՞րն ըս քյինըմ, ա՛յ Ղարաղուշ։

Ղարաղուշըն ասըմ ա. — Բախտ պիժանողին կոշտը։

Ծուկնը ասըմ ա. — Ցըես քյըեզ ծովավը անց կըկըցնիմ, մինակ յըես մին խընթիրք օնիմ բախտ պիժանողին անա։ Վեր քյինիս, կասիս էս հինչ ծովըմը մին ծուկըն կա, ընդրա կըլոխը շատ փիս ցավըմ ա։ Էտ ցավան վեր սաս ա հանըմ, ծովին ծուկները լոխ կըտորվըմ ըն։ Թա էտ խե՞ յա իտի՞, գյուդվըմ չի՞։

Էտ ծուկնը Ղարաղուշին անց ա կըցընըմ ծովին էն մին ղոլը, Ղարաղուշը ընգնըմ ա ուրան հըղեն, քյինըմ։ Քյինըմ ա, քյինըմ, շատ ա քյինըմ, թա խըրեգյ, շատ նան խըրեգյը աստուծ ա գյուղում, հըսնըմ ա մին վանքի։ Նի յա մընընըմ մաչը, տեսնըմ մին ծուրունի մեչին աղոթկ ա անըմ։

Ղարաղուշը մին էլ տուս ա կյամ, տուսումը սպասըմ, միչև էտ ծուրունին աղոթկը կը պըրծնի։

Ծուրունին վեր տուս ա կյամ, ըտրան տեսնըմ, հըրցընըմ ա.

— Ա՛ վերթի, հի՞նչ խընթիրք օնիս։

Ղարաղուշը օզըմ ա, թա նաղլ անի, ամմա էտ ծուրունին ասըմ ա. — Հաչա քյինի ընդեղ մին ախպուր կա, էտ ըխպըրըմը իրեսըտ լվաց, ետավ եք ասի, թա հի՞նչ ըս օզըմ։

Ղարաղուշը քյինըմ ա, ծրեռքերը լվանըմ, տեսնըմ ծրեռքերըն էլ ա սիպտակալ, իրեսըն էլ ա սիպտակալ։ Վեր նովին ճիրըմը ուրան տեսնըմ ա, մընըմ ա մաթալ։

Ետ ա արեռնըմ կյամ, թա էտ ծուրունուն պատմի, ծուրունին ասըմ ա. — Քյինա սաղ շանըտ լվաց, ետավ եք ասի։

Քյինըմ ա լըղանըմ, սաղ շանը սիպտակըմ ա։

Կյամ ա էտ ծրեր մարթին կոշտը, լոխ նաղլ անըմ, կանվերթըն էլ տամ, էն օրիշ թաքավերին խընթիրըն էլ ասըմ, էն կլոխը ցավըմ ծուկնին խընթիրըն էլ ասըմ, պըրծընըմ։

Էտ ծրեր մարթը ասըմ ա. — Քյըեզ էլհա դարդ օնի՞ս, թա չէ։

Ասըմ ա. — Չէ, մինակ լհա էն թաքավերին նան ծուկնինըն ա։

Էտ ծուրունին ասըմ ա. — Կը քյինիս, ճընապարին, ծովին ղրաղին էն ծուկնին կասիս, հալա-լըգյա քյըեզ ծովին էն մին ղոլը անց կըցընի։ Վեր անց կըկըցնի, մին խիլլա էլ տենը կըքյինիս, թա-ղադան ասիս. «Ա՛ ծուկնը, քու կըլխըմըտ մին մեծ պըռլյանդ կա»։ Համ կասիս, համ էլ մին լավ կըլխին կըթըխիս։ Էտ ծուկնը սաբը ա կյալու, սաբրին նըհետ ըտրա պրբանան մին մեծ պըռլյանդ ա եր ընգնելու, յոր կօնիս, տինիս շուբումըտ, քյինիս։ Քյինալիս կասիս. «Ա՛ ծուկնը լհա էտ ա քու կըլխիտ ցավին մանին, մըհեդյանց տենը էլ կըլոխըտ ցըվիլու չի»։— Ետավ էտ ծրեր մարթը ասըմ ա. — Կը քյինիս համին էն թաքավերին ասիս, վեր ուրան էն պալատին պատը, վեր հիշքան շինըմ ըն, էլհա պարան ա կյամ, համին էն պատին տակի բընովրըմը էն ա վրեսկե կա, թընդյակին քարեր կա, քանի վեր ամառնը տաք ա ինըմ, ըտրանք թըքանըմ ըն, տըռըզվըմ, լենանըմ, պատը պարան տամ։ Էտ ըսելանը ետը, էտ թաքավերան հինչ վեր օղիս տալու յա։

Ղարաղուշը կյամ ա, ետ տրեռնըմ, կյամ հըսնըմ էտ թաքավերին կոշտը, լոխ նաղլ անըմ։

Էտ թաքավերըն ասըմ ա.— Հիշքա՞ն վրեսկե յըս օղըմ, քյըեզ տամ, քու էտ ջափիտ հետի։

Ղարաղուշըն ասըմ ա. — Յըես քյըզանա վրեսկե չըմ օղըմ, յըես քյըզանա օղըմ ըմ քառասուն տըղա, քառասուն ախճիգյ, քա-ռասուն տըղամարթ, քառասուն կընեգյ, մին էտքան էլ ծիյանք, ուրանց սարքերավը։

Թաքավերը էտ լոխ տամ ա։

Ղարաղուշը էտքանը եր կալած ճընապարվըմ ա գիբի Սուղումուն իմաստունին երգյիրը։

Տասը վերստի յրա նըստըմ ըն դինշանան։ Էտ պըռլյանդնին վեր Ղարաղուշին վիզավըն ար քըցած, սաղ ճընապարին լուս ա տամ։ Էտ լուսին շոխկը ընգնըմ ա Սուղումուն իմաստուն թաքավերին պալատին յրան։ Էտ լուսին դարդան վեզիրը կյամ ա, թա տրեսնա հի՞նչ ա։

Վեր վեզիրը կյամ ա, տրեսնըմ ըտրանց մեծին, ուրան մըթկըմը

տինում ա, վեր թաքավերին ախճիգյը տա ըտրա։ Էտ մրեթկը կյամ ա թաքավերին ասում. — Պեր ախճիգյըտ տանք էն տըղին։

Թաքավերըն ասում ա. — Բա՞լքյաս էն տըղան օգում չի՞։

Վեզիրըն ասում ա. — Ցրես կըքյինիմ, ասիմ, ա՞մա՞լ կըպերիմ։

Վեզիրը քյինում ա Ղարաղուշին ասում։ Դե վեզիրը հու ճընանչում չի ընդրան, սաբա՞ը վեր սիպտակալ ար։

Ղարաղուշըն ասում ա. — Թող ինքյը կյա, ասի, էն վախտը կողիմ էտ ըխճրկան։

Վեզիրը քյինում ա թաքավերին, թաքուհուն, ուրանց ըխճրկանը յոր օնում, կյամ։

Տըղան ռազի յա կըենում, էտ ախճիգյըն էլ ա ռազի կըենում։ Լոխ մինտեղ կյամ ըն Սուղումուն իմաստուն թաքավերին պալատը։

Ըտրանա ետը տասնըմինինջի օրը հըրսանեքյը ըսկսելի վախտը ադաթ կար, վեր առաչ թաքավերը նան թաքուհին ծրեռք տան փրեսին, նոր նըստին։

Էտ վախտը փրեսան ասում ա. — Առաչ թող թաքավերըն նան թաքուհին նըստին ետավ ծառան։

Ըտրա ասածան պեն չըն կրլխու ընգնում։ Հըրսանիքին էն թունդ վախտը փրեսան ուրան ջուրան հանում ա էն կանվերթը, տամ Սուղումուն իմաստունին։

Սուղումուն իմաստունը մընում ա մաթ մընացած, հրամմայում ա՝ հենգյ մունուտ հըրսանիքը կաղնի։

Ետավ էտ կանվերթը ծեռքին լոխճին ասում ա. — Հու վեր մին պենի հետա ընգնի, կըհասնի։

Հըրսանիքը էլհա սկըսում ըն, օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ըն անում, Ղարաղուշըն էլ ուրան հետի լավ բախտավեր ապրում ա։ Սուղումուն իմաստունան էլ իմաստութուն ա սըվերում, ընդրա մըռնելանը ետը ինքյը նստում կահին։